ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԼԻԱՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ

Բանալի բառեր - սոցիալական շուկայական տնտեսություն, սոցիալական պաշտպանություն, համընդհանուր բարեկեցություն, ազատ շուկաներ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական շուկայական տնտեսության սկզբունքները մշակվել են 20-րդ դարի առաջին կեսին՝ ի պատասխան Եվրոպայի աղետալի ճգնաժամին, տոտալիտարիզմին և պատերազմին: Դա մարդկային հասարակությանը նվիրված փիլիսոփայության արտահայտությունն է, որն ուղղված է բոլոր անհատների արժանապատվությանը, բարեկեցությանը, ինքնորոշմանը, ազատությանը և պատասխանատվությանը, ինչպես ասվում է ՄԱԿ-ի կողմից ընդունված Մարդու իրավունքների 1948 թվականի դեկտեմբերի 10-ին ընդունված հռչակագրում[1]: Սոցիալական շուկայական տնտեսությունը շատ ավելին է, քան պարզապես տնտեսագիտության մոտեցում: Այն ենթադրում է, որ ազատ շուկայական տնտեսությունը պետք է հիմնվի սեփականության իրավունքի, պայմանագրերից ազատականացման, գնային ազատության, ազատ առևտրի, տնտեսական քաղաքականության կանխատեսելիության, օրենքի գերակայության, անձնական պատասխանատվության և գների կայունության վրա: Տնտեսական այդ կարգը կարևորում է նաև միջավայրի պահպանության և սոցիալական ներառման պայմանների ապահովումը: Ազատ շուկա-

[1] Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր՝ ընդունված 10 դեկտեմբերի 1948, Միավորված ազգերի կազմակերպություն, ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչություն, Երևան 2010, էջ 10:

յավարման գների համակարգում ձեռներեցների և սպառողների միջև մրցակցությունը և համագործակցությունը կազմում են ուրույն գործընթաց, որն ի վիճակի է ներառել շատ ավելին, քան դա հնարավոր էր իրականացնել իշխանությունների կենտրոնական պլանավորմամբ: Ձեռնարկատիրական ուժերն այդպիսով վերածվում են հզոր գործիքի՝ համընդհանուր բարեկացություն ստեղծելու համար: Սրան հասնելու համար պետությունը չպետք է լինի ամեն ինչում ներառված, այլ պետք է գործի՝ որպես կանոններ մշակող և վերահսկող՝ սահմանելով սոցիալական արդարության համընդհանուր կանոններ:

Տնտեսական ու սոցիալական կարգերի սինթեզը միավորում է «անհատական ազատությունը» և «ազատ շուկայական մրցակցությունը», «հավասար հնարավորությունների» և «սոցիալական իրավունքների» հետ որոնք, հակառակ տարածված համոզմունքի, լիովին համատեղելի հասկացություններ են: Դա նախկինում գիտակցվում էր որպես առանց ազատության և մրցակցության կարգ, որը զսպում էր մասնավոր և պետական ուժերին, սակայն սոցիալական հարցերին լուծում չէր տալիս:

Այս համատեքստում անհրաժեշտ է գիտակցել շահույթ չհետապնդող և կամավոր հատվածների տնտեսական և սոցիալական կարևորությունը, քանի որ դրանք ապահովում են աշխատանքի արժեքավոր հնարավորություններ և կատարում են չափազանց կարևոր դեր հասարակության բարեկեցության խթանման հարցում: Հասարակության խոցելի խմբերը ստանում են ուղղակի աջակցություն, քանի դեռ դրանք չեն կարող լինել ինքնաբավ, պետական միջամտությունը ենթադրում է որոշակի արտոնությունների տրամադրում, սակայն ոչ ուղիղ դրամական աջակցության տրամադրում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ խոցելի մարդիկ ի վիճակի չեն ընդգրկվելու զբաղվածության ոլորտում:

Այս առումով պետք է խրախուսվի պետության ապակենտրոնացումը և իշխանության, պատասխանատվության և համապատասխան ռեսուրսների տեղափոխումը համայնքներ և միջին կառավարման օղակներ:

Այսպիսով հարկ է նշել, որ սոցիալական շուկայական տնտեսությունը հիմնված է հետևյալ հինգ հիմնական հասկացությունների վրա.

Համընդհանուր բարեկեցություն, որը ենթադրում է ապահովել յուրաքանչյուր քաղաքացու համար գոյության արժանավայել պայմաններ, սոցիալական պաշտպանվածություն, սոցիալական քաղաքականության տեսակ, որը միտված է քաղաքացիների կենսամակարդակի բարելավմանը, սոցիալական ռիսկի կանխմանը:

Անհատական ազատություն, անձնական պատասխանատվություն և մասնավոր ինքնավարություն պետության նկատմամբ և շահագրգիռ հզոր խմբեր՝ ներառված ուժեղ քաղաքացիական հասարակության մեջ:

Ազատ շուկաներ, այսինքն՝ գործող մրցակցություն, միջոցների մասնավոր սեփականություն, արտադրություն, անվճար պայմաններ, պայմանագրերի ազատություն, մասնավոր պատասխանատվություն, մենաշնորհների դեմ վերահսկողություն և ուժի չարաշահման, ազատ միջազգային առևտրի և դրամավարկային կայունության մասին: Մի խոսքով, շուկան անվճար է միայն այն դեպքում, երբ կան ընդհանուր կանոններ, որոնք պարզ, կիրառելի և օրինական են:

Համերաշխություն և օժանդակություն՝ մարդկային արժանապատվությունը հարգելու և պաշտպանելու նպատակով սոցիալական կայունություն և հանդուրժողականություն:

Հարգանք ապագա սերունդների նկատմամբ, ում վստահված են հետագա անելիքները:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախաբանի համաձայն՝ մեր երկիրը կոչված է ապահովելու բնակչության համընդհանուր բարեկեցությունը: Հաշվի առնելով սոցիալական պետության առջև դրված խնդիրները, սոցիալ-տնտեսական ու հասարակական կյանքում արձանագրվող գործընթացները՝ մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը վավերացրած պետությունները համընդհանուր բարեկեցություն ապահովելու նպատակով պետք է կատարելագործեն իրենց սոցիալական պաշտպանության համակարգերը:

Խորհրդային Հայաստանում գործում էր սոցիալական պաշտպանության որոշակի համակարգ, որը զբաղվում էր խոցելի խմբերի՝ տարեցների, կենսաթոշակառուների, պատերազմի վետերանների, հաշմանդամների, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և այլոց սոցիալա-

կան ապահովության խնդիրների լուծմամբ: Անկախության ձեռքբերումից հետո ՀՀ-ում սկսեց ձևավորվել սոցիալական պաշտպանության նոր համակարգ, որը սկզբնական շրջանում փորձում էր պաշտպանել բնակչությանը տնտեսական և սոցիալական ցնցումներից: Այդ համակարգի ձևավորումը սկզբնական շրջանում տեղի էր ունենում տարերայնորեն՝ պայմանավորված սոցիալ-տնտեսական նոր մարտահրավերներով: Ավելին, այդ համակարգի ձևավորման գործընթացը դեռևս չի ավարտվել: Ստեղծված իրավիճակում չափազանց կարևորվում է հետխորհրդային Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման գործընթացի ուսումնասիրումը, սոցիալական պաշտպանության գործող համակարգի առանձնահատկությունների, կառուցվածքի, գործառույթների, համակարգի ձևավորման գործընթացը տրամաբանական ավարտին հասցնելուն խոչընդոտող հիմնախնդիրների վերլուծությունը, ինչը հնարավորություն կտա ուրվագծելու ՀՀ-ում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման հնարավորությունները[1]:

Հեղինակի կողմից իրականացված հետազոտության արդյունքներից կարելի է եզրակացնել.

Չնայած որ սոցիալական շուկայական տնտեսությունը ենթադրում է համընդհանուր բարեկեցության ապահովում, ՀՀ-ում սոցիալական պաշտպանության ներկայիս մեխանիզմները առավելապես ուղղված էին բնակչության առանձին կարիքավոր խմբերին օգնելուն՝ կենսաթոշակների և նպաստների, միանվագ և պարբերական դրամական լրավճարների, բնամթերքի տրամադրման միջոցով: Փաստորեն գոյատևման ապահովումը և բացարձակ աղքատության հաղթահարումը (սրան էր ուղղված առաջին հերթին աղքատության ընտանեկան նպաստի ծրագիրը) դիտվում են որպես ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության դեռևս ամբողջովին չձևավորված համակարգի հիմնական նպատակներ: Սոցիալական պաշտպանության պասիվ ձևի գերակայումը վկայում է այն մասին, որ դեռևս անցում չի կատարվել պետության միակողմանի պարտականություններից պետություն-քաղաքացի երկկողմանի պատասխանատ-

[1] **Ցարմալոյան Մ.,** Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը հետխորհրդային հայաստանում. սոցիոլոգիական վերլուծություն, Երևան, 2017, էջ. 119:

վությանը: Այս ամենի արդյունքում ձևավորվել է սոցիալական պաշտպանության ներկայիս մոդելը ՀՀ-ում: Եվրոպական վերանայված սոցիալական խարտիային[1] միանալուց հետո ՀՀ-ում գործող սոցիալական պաշտպանության մոդելը չի փոխվել, ինչպես նաև ամբողջովին չի ձևավորվել սոցիալական պաշտպանության նոր համակարգը՝ սոցիալական պաշտպանության մեխանիզմներից առավելապես սոցիալական օգնության մեխանիզմի կարևորման հետևանքով: Սոցիալական ոլորտի ներկայիս բարեփոխումների զգալի մասը ևս ուղղված է նյութական աջակցության մեծացմանը՝ մասնավորապես մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի, մայրության նպաստի, ծերության նպաստի, կենսաթոշակների նպաստի, հաշմանդամության նպաստների գումարի չափի բարձրացում՝ պակաս ուշադրություն դարձնելով խոցելի խմբերի ինքնաբավության, նպաստներից կախվածություն ձեռք չբերելուն:

2020 թ-ի Արցախյան պատերազմի հետևանքով շատ մարդիկ իսպառ զրկվեցին իրենց մի շարք իրավունքներից. կյանքի իրավունքը հանդիսանում է բոլոր իրավունքներից առաջնայինը, սակայն այս պատերազմը խլեց ինչպես զինծառայողների, այնպես էլ խաղաղ բնակիչների, երեխաների, տարեցների, հղիների կյանքեր (հոկտեմբերի 28-ին հրթիռակոծվել է նաև Ստեփանակերտի ծննդատունը)[2]: Արդյունքում դեռևս փետրվարի 16-ին Արցախի պաշտպանության բանակի հրապարակած ցուցակների համաձայն՝ հայկական կողմի զոհերի թիվը 2364 է[3]: 2021 թ-ի հոկտեմբերի 31-ի դրությամբ, ըստ ՀՀ առողջապահության նախարարության, հաստատվել է կորոնավիրուսային հիվանդության ընդհանուր 308,326 դեպք, որոնցից 269,100-ը՝առողջացած: Փաստացի բուժում է ստանում 31,603 հիվանդ: Ընդհանուր առմամբ, կորոնավիրուսի հետևանքով 6328 մահվան դեպք է արձանագրվել ՀՀ-ում[1]: Ինչ վերաբերում է Քովիդ 19 համաճարակի և 2020 թ-ի Արցախյան պատերազմի պայմաններում սոցիալական պաշտպանության իրականացմանը, ապա ակնհայտ էր, որ համաճարակի պարագայում ևս այն ուղղված էր կոնկրետ խմբերի աջակ-

[1] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24230, (դիտվել է՝ 08.02.2021, 18:11)
[2] https://artsakhombuds.am/hy/news/474 (դիտվել է՝ 10.03.2021, 20:10)
[3] https://www.nkrmil.am/news/view/3208 (դիտվել է՝ 01.03.2022, 14:05)

ցությանը, համընդհանուր բարեկեցության սկզբունքը պահպանված չէր, ինչը, օրինակ, մեր հարևան երկրներում խիստ կարևորվել էր: Ի լրումն, անդրադառնալով 2020 թ-ի Արցախյան պատերազմից տուժածների աջակցությանը՝ այստեղ պետությունը առաջնային տեղում կարևորեց նյութական աջացությունը՝ Արցախում հաշվառում ունեցող 90.000 քաղաքացու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրելով 6.5 մլրդ դրամ[2], մինչդեռ բազմապիսի էին տուժածների հիմնախնդիրները՝ հոգեբանական, սոցիալական, իրավական և այլն:

ՀՀ-ում սոցիալական պաշտպանության համակարգի կառավարման հիմնախնդիրները ի մի բերելով՝ կարող ենք խմբավորել հետևյալ կերպ. ա) խնդրահարույց է սոցիալական ոլորտի անհամաչափ ֆինանսավորումը, այսինքն երբ լրացուցիչ սոցիալական օգնությունից արտոնություններ-ի տեսքով օգտվում են այն քաղաքացիները, ովքեր ենթադրվում է, որ արդեն իսկ ունեն եկամտի որոշակի աղբյուր՝ կենսաթոշակ, նպաստ և այլն, մինչդեռ ռիսկային վիճակում հայտնված որոշակի սոցիալական խմբերը՝ ոչ: Այսինքն՝ ՀՀ բնակչության խոցելիության գնահատման ցուցանիշները լուրջ վերանայման կարիք ունեն: բ) Խնդրահարույց է նաև երեխաների և տարեցների շուրջօրյա հաստատությունների զգալի կրճատումը, դեռևս այլընտրանքային ուժեղացված լուծումների, ռեսուրսների, մասնագիտական աշխատուժ պակասի պարագայում: գ) Դերակատարների ներգրավման հետ կապված՝ հարկ է նշել, որ հասարակական և մասնավոր սեկտորները շարունակում են մնալ նվազ համագործակցային մակարդակում, իսկ ՏԻՄ-երի ներգրավման փորձերը առ այսօր զգալի արդյունքներ չեն տալիս: Ի լրումն նշածների՝ հիմնախնդիր է նաև սոցիալական պաշտպանության ոլորտի պրակտիկ մասնագետների մասնագիտական կրթությունը, իրավասությունը (կոմպետենտությունը) և բանիմացությունը. անհրաժեշտ է պետական սոցիալական ոլորտի աշխատակիցների պրոֆեսիոնալիզմի բարձրացմանն ուղղված քայլեր իրականացնել, ոլորտում մեծացնել համապատասխան կրթությամբ աշխատակիցների քանակը, դ) Որպեսզի նպաստառու ընտանիքները ձեռք չբերեն կախ-

[1] https://www.moh.am/#1/4480 (դիտվել է՝ 31.10.2022, 20:35)
[2] https://www.mlsa.am/?p=26860 (դիտվել է՝ 08.03.2022, 17:11)

վածություն պետական նպաստների ծրագրերից, տարիներ շարունակ չլինեն վերջինիս շահառուն, կարողանան դուրս գալ դժվարին իրավիճակից և դառնան ինքնաբավ, անհրաժեշտ է արմատական փոփոխություն իրականացնել ծրագրի սկզբունքների հարցում՝ վեկտորն ուղղելով ընտանիքիների հզորացմանը, քաջալերմանը և ոչ թե կախվածություն առաջացնելուն, անհրաժեշտ է նաև իրականացնել օրենսդրական դաշտի բարեփոխումներ (ՀՀ սոցիալական աշխատանքի մասին օրենքի ընդունում, որով էլ կկանոնակարգվեն ոլորտի մասնագետների պահանջները և իրականացրած գործունեությունը):

Ուսումնասիրելով միջազգային առաջատար փորձը և իրականացնելով փորձագիտական հարցում ՀՀ-ում սոցիալական ձեռներեցություն իրականացնող մասնագետների հետ՝ եզրահանգում ենք, որ անհրաժեշտ է կիրառել սոցիալական ձեռներեցության զարգացմանն ուղղված մեխանիզմ (տե՛ս էջ 100), որը կօգնի հաղթահարելու ոլորտում առկա խոչընդոտներն ու զարգացնելու սոցիալական ձեռներեցության իրականացման պրակտիկան ՀՀ-ում: Այսպիսով առաջարկվում է. ա) ձեռնարկներ, աշխատություններ մշակել սոցիալական ձեռներեցության սահմանումների, արժեքների և սկզբունքների, չափորոշիչների և ազդեցության գնահատման վերաբերյալ: Հանրային իրազեկման բարձրացման նպատակով տարբեր եղանակներով լուսաբանել սոցիալական ձեռներցության, հաջողված օրինակները և այլն: Ավարտին հասցնել «Սոցիալական ձեռնարկատիրության զարգացման հայեցակարգի» ընդունումը, որը ներկայումս գտնվում է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում[1]: բ) Սոցիալական ձեռներեցության կազմակերպաիրավական չափորոշիչներ սահմանել. շնորհել «սոցիալական ձեռներեցության» կարգավիճակ այն կազմակերպությունների գործունեություններին, որոնց հիմքում ընկած է սոցիալական խնդիրների բարձրաձայնումը, դրանց բարելավմանն ուղղված գործողությունների մշակումը և իրականացումը, բնապահապանական միջոցառումները և որպես արդյունք՝ դրական սոցիալական ազդեցությունը: գ) Սոցիալական ձեռներեցության

[1] Սոցիալական ձեռնակատիրության զարգացման հայեցակարգ https://www.e-draft.am/projects/1180/about (դիտվել է՝ 11.01.2022, 20:06)

չափորոշիչները նաև պետք է հստակեցնեն ֆինանսական հոսքերը. ստացված շահույթի 50%-ը կամ ավելին ներդնել սոցիալական ազդեցություն ապահովելու նպատակով: Բացի այդ, ինչպես վկայեց միջազգային փորձը, սոցիալական ձեռներեցությունը նպաստում է աշխատանքային անձնակազմում խոցելի խմբերի ներգրավմանը, ինչը կապահովի վերջիններիս աշխատանքային ինտեգրումը: Սոցիալական ձեռներեցության իրականացման հաջորդ չափորոշիչը վերաբերում է ֆինանսավորման հստակեցմանը, ըստ որի ձեռներեցության շրջանառության 70%-ը կամ ավելին պետք է գոյանա ձեռնարկատիրական գործունեությունից, ինչը կապահովի վերջինիս կայունությունը: դ) Ի հավելում՝ անհրաժեշտ է իրականացնել ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի (ՓՄՁ ԶԱԿ) ռազմավարության փոփոխություն՝ վերջինիս հաղորդելով սոցիալական ուղղվածություն և առկա ֆոնդերն ուղղել դեպի սոցիալական ձեռներեցությունների ստեղծման ու զարգացման մեկնարկային հնարավորությունների ընձեռնմանը: ե) սոցիալական ձեռներցություն սկսելու մեկնարկային ծրագրերի (ստարտափերի) ընդլայում:

Սոցիալական շուկայական տնտեսության միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք երկրներում կիրառվել է սոցիալական շուկայակական տնտեսության ցուցանիշների չափում: Իրականցվել է սոցիոլոգիական հետազոտություն երկու մեթոդի կիրառմամբ ՝ փորձագիտական հարցում և փաստաթղթերի վերլուծություն: Այդ հետազոտության արդյունքների վերլուծությունը հանգեցնում է հետևյալ եզրահանգումներին. ա) սոցիալական շուկայական տնտեսության չափման գլխավոր ցուցանիշներից մեկը կապիտալի շարժի վերահսկողությունն է, որը, ըստ փորձագետների, տեղի է ունենում մասնակիորեն, քանի որ վերահսկողությունը բավականին թույլ է, առկա է ստվերային տնտեսության զգալի ծավալ: ՀՀ շուկա մուտք գործելիս գոյություն ունեն որոշ սահմանափակումներ՝ կապված շուկայավարման պրակտիկ գիտելիքների պակասի, ձեռնարկատիրական հմտությունների պակասի, մեկնարկային աջակցող ծրագրերի սակավության հետ: բ) Սոցիալական շուկայական տնտեսության կարևոր ցուցանիշներից է նաև միջին ձեռներեցների թվի հարաբերակցությունը ընդհանուր ձեռներեցների թվին: Համա-

ձայն ՏԶՆՆ կողմից տրամադրված վիճակագրական տվյալների՝ ըստ հարկ վճարողների քանակի՝ Հայաստանում գրանցված են և գործում են 79,747 ՓՄՁ սուբյեկտ՝ առ 2018 թ-ի հունվարի 1-ի դրության, որը կազմում է ընդհանուր հարկ վճարող ձեռնարկությունների 99,3%-ը: ՓՄՁ սուբյեկտների կազմում գերակշիռ են գերփոքր ձեռնարկությունները՝ կազմելով գրանցված բոլոր ձեռնարկությունների 91.5%-ը[1]: գ) ՀՀ պետբյուջեից սոցիալական պաշտպանության ծախսերի հատկացումը բոլոր փորձագետների կարծիքով համապատասխանում է պահանջարկին, այն 2021 թ-ին կազմել է 503,670 մլրդ ՀՀ դրամ[2]: Չնայած որ սոցիալական ոլորտի հատկացումն ամենամեծն է բոլոր ոլորտների համեմատ, սակայն դրա կառավարման արդյունավետությունը բավականին ցածր է, քանի որ թիրախ խումբը շարունակում է տարիներ շարունակ մնալ սոցիալական պաշտպանության համակարգի շահառու. սա խոսում է հնացած ծրագրերի և մեխանիզմների մասին, որոնք հրատապ փոփոխության կարիք ունեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՈՒՆ

Այսպիսով, սոցիալական շուկայական տնտեսության կառավարման հեռանկարներն ընդլայնելու և արդյունավետ դարձնելու տեսանկյունից կարևորվում է.

ա) Համաձայն Եվրոպական վերանայված սոցիալական խարտիայի՝[3] բնակչության առանձին խմբերի սոցիալական պաշտպանությանն առնչվող հոդվածների կիրարկումը, ընդհանուր բարեկեցությունը սոցիալական պաշտպանության համակարգի կառավարման առաջնային նպատակի սահմանումը, որն իր մեջ կներառի ոչ միայն սոցիալական հիմնախնդիրների հաղթահարումը, այլ նաև դրանց կանխարգելումը, այս առումով անհրաժեշտ է բ) «Բնակչության սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որը թույլ կտա «ընդլայնել» սոցիալական պաշտպանության օբյեկտը խոցելի խմբերից դեպի սոցիալական

---

[1] ՓՄՁ ոլորտի գնահատման հետազոտություն Հայաստանում, Հայկական բիզնես կոալիցիա, Երևան 2018, էջ 13:

[2] Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում N 2215-Ն, հաստատված 30 դեկտեմբերի 2020 թվականի, Հավելված 1:

[3] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24230, (դիտվել է՝ 08.02.2022, 18:11)

ռիսկերից պաշտպանություն և սուբյեկտները՝ պետությունից ՏԻՄ, հասարակական և մասնավոր հատված։ գ) Պետական սոցիալական երաշխիքների սահմանումը, որը կներառի ոչ միայն սոցիալական օգնության տրամադրում, այլև սոցիալական ապահովագրության մասնակցային մեխանիզմների միջոցով մարդկանց ինքնաբավության բարձրացում, սոցիալական պաշպանությանն ուղղված ծառայությունների տեսականու ընդլայնումը՝ հատկապես կարևորելով վերականգնողական, խորհրդատվական, ինչպես նաև սոցիալական աշխատանքի ծառայությունների զարգացումը (ինչի խիստ անհրաժեշտությունը զգացվեց 2020 թ-ի Արցախյան պատերազմի պայմաններում) դ) մասնավոր ներդրումների խթանումը, պետության և մասնավոր սեկտորի միջև համագործակցության զարգացումը՝ համագործակցության համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ հենք ստեղծելով, ինչպես նաև մասնավոր սեկտորի համար արտոնություններ սահմանելով՝ անհատույց ներդրումներ կատարելու դիմաց, ե) պետություն-հասարակական սեկտոր կառուցողական հարաբերությունների հաստատման խթանում՝ կարևորելով սոցիալական պատվերի ձևավորման գաղափարը, քաղաքացիների մասնակցության խթանում՝ ուղղված սեփական անձի սոցիալական քաղաքականության մշակման, նյութական ապահովվածության, ինքնաբավության, ինքնապաշտպանության ապահովման հարցերում, զ) սոցիալական պաշտպանության ապահովագրական սկզբունքների ու մեխանիզմների ուժեղացում՝ վարձու աշխատողների, գործատուների, ինքնազբաղվածների մասնակցությամբ՝ կանոնակարգելով համակարգի դերակատարների միջև փոխադարձ կապերը, է) բնակչության սոցիալական պաշտպանության գործող համակարգի ֆինանսավորման սկզբունքների վերանայումը՝ կարևորելով սոցիալական ծառայություններ տրամադրող ոչ ստացիոնար հաստատությունների ֆինանսավորումը, ը)սոցիալական պաշտպանության ներկա համակարգում աշխատող մասնագետների պրոֆեսիոնալիզմի բարձրացումը՝ հատկապես շեշտադրելով սոցիալական ծառայություններ մատուցող, սակայն մասնագիտական կրթություն չունեցող աշխատակիցների մասնագիտական կրթության կամ որակավարան ձեռքբերման կարգավորումը։

Лиана Мкртчян, Перспективы управления социальной рыночной экономикой в РА - Принципы социальной рыночной экономики были разработаны в первой половине 20 века в ответ на катастрофический кризис, тоталитаризм и войну в Европе. Это выражение философии, посвященной человеческому обществу, которое направлено на достоинство, всеобщее обеспечение, самоопределение, свободу и ответственность всех людей, как указано в Декларации прав человека, принятой Организацией Объединенных Наций 10 декабря, 1948 года. Социальная рыночная экономика предполагает, что свободная рыночная экономика должна основываться на правах собственности, либерализации контрактов, свободе цен, свободной торговле, предсказуемости экономической политики, верховенстве закона, личной ответственности и ценовой стабильности. Этот экономический порядок также подчеркивает обеспечение условий для защиты окружающей среды и социальной интеграции. Следует отметить, что социальная рыночная экономика базируется на следующих пяти основных концепциях:

• всеобщее обеспечение подразумевающее обеспечение достойных условий жизни каждого гражданина, социальную защиту, вид социальной политики, направленный на повышение уровня жизни граждан, предотвращение социального риска.

• Индивидуальная свобода, личная ответственность и личная автономия по отношению к государству и влиятельным группам интересов, вовлечённых в сильное гражданское общество.

• Свободные рынки, то есть эффективная конкуренция, частная собственность, производство, бесплатные условия, свобода контрактов, частная ответственность, контроль над монополиями и злоупотреблением властью, свободная международная торговля и денежная стабильность. Одним словом, рынок свободен только тогда, когда существуют общие правила, которые ясны, применимы и законны.

• Солидарность и поддержка: социальная стабильность и толерантность для защиты и уважения человеческого достоинства.

• Уважение к будущим поколениям, которым доверено, что делать дальше.

Liana Mkrtchyan, Prospects of social market economy management in RA - The principles of the social market economy were developed in the first half of the 20th century in response to Europe's catastrophic crisis, totalitarianism, and war. It is the expression of a philosophy dedicated to human society, which is aimed at the dignity, welfare, self-determination, freedom and responsibility of all individuals, as stated in the Declaration of Human Rights adopted by the United Nations on December 10, 1948. The social market economy assumes that a free market economy should be based on property rights, liberalization of contracts, price freedom, free trade, predictability of economic policy, the rule of law, personal responsibility and price stability. This economic order also emphasizes the provision of conditions for environmental protection and social inclusion.

Thus, it should be noted that the social market economy is based on the following five main concepts:

• welfare, which implies providing decent living conditions for every citizen, social protection, a type of social policy aimed at improving the living standards of citizens, preventing social risk.

• Individual freedom, personal responsibility and private autonomy vis-à-vis the state and powerful interest groups embedded in a strong civil society.

• Free markets, i.e. effective competition, private ownership of funds, production, free terms, freedom of contract, private responsibility, controls against monopolies and abuse of power, free international trade, and monetary stability. In short, a market is free only when there are general rules that are clear, enforceable and legal.

• Solidarity and support to respect and protect human dignity, social stability and tolerance.

• Respect for the future generations, who are entrusted with the future steps.

Ուղարկվել է խմբագրություն 04.01.2023թ.
Գրախոսվել է 10.01.2023թ.
Ստորագրվել է տպագրության 11.01.2023թ.